Դանիել Վարուժան

Հերկեր

Հո՜, հոո՛ հոո՛ հոո՛. Հողին տակ հրոնդյունն է արորին
Լուրթ մշուշին մեջ առտվան, կողին վրա բլուրին
Կ'երթան եզները հուժկու՝ զանգակներով դաշնավոր,
Ու մսուրին վերջին հարդը կ'որոճան գլխիկոր:

Սարին ուսեն ծըյլացող արևն ահա կը ծագի
Ու մըշակին ճակտին վրա կը դնե հումբույրը ոսկի:
Մարդը կ'երթա երգելով՝ մաճն ափին մեջ պընդաջիղ,
Ու իր ճամբան կը գծե իր հոգիին պես ուղիղ:

Հո՜, հոո՛ հոո՛ հոո՛. Ակոսները կը բացվին մըխալով,
Եվ կը դիզվին արգավանդ հողակոշտերն իրար քով:
Մեկ ծագեն մյուսն հուլորեն կը սողա խոփը պողպատ,
Կը հեղեղե հերկերուն մեջ իր լույսերը արծաթ:

Իր տակ ճըմլված, կարեվեր, կը գալարվի հույր Ճըճին.
Կ'ահաբեկին խըլուրդներ իրենց խուղին մեջ մըթին:
Բունծերն ահա կ'ոռոգին մերթ օձերու արյունով,
Ջոր ըսպաննած է արորն անոնց գլուխեն անցնելով:

Արևն արդեն կը հոսե իր երակներն հրածորան
Ակոսներուն նորաբաց արգանդին մեջ հոտևան:
Հո՛, հոո՛ հոո՛ հոո՛. Անդաստանն է կորդացած այս տարի,

Բայց հերկերուն ծարքն արդեն անհունորեն կ՚երկարի:

Եզները հաղթ թափ կու տան, դողացնելով մերթ ընդ մերթ,
Սուր խրթանեն՝ ըստևներն իրենց փորին լուսաշերտ:
Ի՛նչ փույթ թե ճղուղն արորիին խութին դեմ հա՛նկարծ կու լա,
Եվ կը ծորի մըշակին քիրտը ամեն գուղձի վրա:

Դեռ սուրբ կոչնակը գյուղին՝ սարին ետև չըհընչած՝
Բըլուրին կողը ամբողջ պիտի ըլլա թըխացած,
Եվ պիտի լայն ակոսները շար ի շար ավարտին՝
Օծված շաղով իրիկվան, շողիքներովն հարկիքին…

Այն ատեն երբ արտին ծայրն հասած, ճիգով մը դողդոջ,
Տըղմուտ արորն հողին մեջ հանկարծ կասի, Մշակը խոնջ
Պիտի խորհի անկասկած – հանո՜ւն վաղվան հունձքերուն–
Թե կարասի՛ մ'ոսկելից կառչեր է խոփը իսկույն: